



05.10.2011

Ընդառաջելով Երևանի միջազգային դպրոցի տնօրինությանը և կարևորելով հնագիտական ժառանգության մանկավարժությունը վաղ դպրոցական տարիքից՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը այսօր ընդունել է դպրոցի հայ և տարբեր ազգություններ ներկայացնող 6-7 տարեկան 16 սաների, որոնց ծնողներն աշխատում են Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններում և արտասահմանյան ձեռնարկություններում: Այցի նպատակն էր պեղածո նյութերի հիման վրա նպաստել նախանադարյան հասարակության և նախամարդու մասին առաջին գիտելիքների յուրացմանը, ինչպես նաև ծանոթանալ Երևանի բնօրրանին՝ Էրեբունի ամրոցին: